

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)		[2] Մերիա		[3] Համար	
26	Սեպտեմբեր	2019 թ.			Բ		2799577615	
[4] Մատուցման ամսաթիվ					Ճշգրտվող հաշիվ վավերագրի			
23	Սեպտեմբեր	2019 թ.			Մերիա		Համար	
					Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ			
Պայմանագիր			[5] Կնքման ամսաթիվ		[6] Համար			
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)								
[7.1] ՀՆՄ կարտի համար								

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի												
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)					0	3	5	3	8	1	1	2
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը												
[10] Անվանումը		«ՎԻ ԳՐՈՒՊ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)										
[11] Բանկային տվյալները		Ամերիաբանկ ՓԲԸ N 157001511280200										
[12] Գտնվելու վայրը (հասցեն)		Յրդ միկ. շրջ. 23 18										
[13] Լրացուցիչ տվյալներ												

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի																		
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)					0	2	6	3	1	2	6	3						
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը																		
[16] Անվանումը		«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ																
[17] Բանկային տվյալները		ՀՀ Ֆին. նախ. աշխ. գործառն. վարչ. N 900011002160																
[18] Գտնվելու վայրը (քնակության վայրը)		ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՍԱՍ ՄԱՍԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5																
[19] Լրացուցիչ տվյալներ																		
[20] Ում միջոցով		<table border="1"> <tr> <td>Անուն, ազգանուն</td> <td></td> </tr> <tr> <td>Լիազորագիր</td> <td>Համար</td> </tr> <tr> <td></td> <td>Ամսաթիվ</td> </tr> </table>											Անուն, ազգանուն		Լիազորագիր	Համար		Ամսաթիվ
Անուն, ազգանուն																		
Լիազորագիր	Համար																	
	Ամսաթիվ																	

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը						
№ ը/Գ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (ըզմանակությունը)	Չափի միավորը	Առիկանոր ծավալը կամ ծանունակաշ թիվը	Միավորի գինը	Զեղ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	Հայերեն-պարսկերեն լեզվի գրավոր թարգմանություն	Էջ	8.1	3475		28147.5
2	Հայերեն-ֆրանսերեն լեզվի գրավոր թարգմանություն	Էջ	11.44	4475		51194
3	Հայերեն-գերմաներեն լեզվի գրավոր թարգմանություն	Էջ	19.21	4475		85964.75
4	Վրացերեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	Էջ	5.81	2975		17284.75
5	Վրացերեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	Էջ	13.17	2975		39180.75
6	Հայերեն-իսպաներեն լեզվի գրավոր թարգմանություն	Էջ	56.35	5450		307107.5
7	Հայերեն-անգլերեն լեզվի գրավոր թարգմանություն	Էջ	5.08	3475		17653
8	Հայերեն-գերմաներեն լեզվի գրավոր թարգմանություն	Էջ	49.1	4475		219722.5
9	Հայերեն-գերմաներեն լեզվի գրավոր թարգմանություն	Էջ	17.16	4475		76791
10	Իտալերեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	Էջ	2.1	6350		13335
11	Գերմաներեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	Էջ	5.29	4475		23672.75
12	Լեհերեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	Էջ	1.7	5975		10157.5
13	Հունարեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	Էջ	42.05	5450		229172.5
14	Հայերեն-պարսկերեն լեզվի գրավոր թարգմանություն	Էջ	8.2	3475		28495
15	Հայերեն-պարսկերեն լեզվի գրավոր թարգմանություն	Էջ	11.55	3475		40136.25
16	Հայերեն-պարսկերեն լեզվի գրավոր թարգմանություն	Էջ	10.34	3475		35931.5

17	Հայերեն-պարսկերեն լեզվի գրավոր թարգմանություն	Էջ	5.35	3475		18591.25
18	Ֆրանսերեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	Էջ	4.89	4475		21882.75
19	Հայերեն-ֆրանսերեն լեզվի գրավոր թարգմանություն	Էջ	7.42	4475		33204.5
20	Հայերեն-ֆրանսերեն լեզվի գրավոր թարգմանություն	Էջ	17.44	4475		78044
21	Պարսկերեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	Էջ	2.51	3475		8722.25
22	Հայերեն-իսպաներեն լեզվի գրավոր թարգմանություն	Էջ	12.65	5450		68942.5
23	Հայերեն-վրացերեն լեզվի գրավոր թարգմանություն	Էջ	83.3	2975		247817.5
24	Գերմաներեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	Էջ	43.9	4475		196452.5
Ընդամենը						1897603.5

Ծառայություն
մատուցող
(աշխատանք
կատարող)

STEPANYAN HMAYAK 2301850293

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

26/09/2019 10:38:14

Ծառայություն
(աշխատանք)
ստացող՝

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Քրեական գործով թարգմանիչ ներգրավելու մասին

29 մարտի 2017թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարշալական շրջանների քննչական բաժնի քննիչ, արդարադատության կապիտան Վ.Մ.Բավսյանի վերանայելով վարույթումս քննվող թիվ 13178717 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

13.03.2017 թ. ըստ. Կենտրոնականի բաժնում հաղորդում է տվել Սեյեդիուման Հեսամյան մասին, որ 20.02.2017թ. իր ծանոթ՝ Արտակ Հենրիկի Սիմոնյանը Տոլստոյ փողոցի 49 հասցեում «Ինտեր-Հոթել» հյուրանոցի, իր վարձակալած թիվ 9 սենյակում գտնվելու ընթացքում սեղանի վրա գաղտնի հափշտակել է 100 ԱՄՆ դոլար գումար և ԻԻՀ «Մելլաթ» բանկի բանկային քարտ:

Դեպքի առթիվ ՀՀ ոստիկանության Կենտրոնականի բաժնում 2017 թվականի մարտի 22-ի քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 13178717 քրեական գործում մախաբանություն կատարելու համար ուղարկվել ՀՀ քննչական կոմիտեի Կենտրոն և Նորք-Մարշալական շրջանների քննչական բաժին:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ քրեական գործով տուժող Սեյեդիուման Հեսամյանի տիրապետում հայերեն լեզվին, տիրապետում է պարսկերեն բանավոր ու գրավոր լեզվին, մախաբանության հանցանքի շարժառիթներում դատավարությունն իրականացվում է հայերեն լեզվով, անհրաժեշտություն է առաջացել սույն քրեական գործով վարույթին ներգրավել «ՎԻ Գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ Հրանուշ Սկրտչի Թախմասյանին կատարվելիք քննչական գործողությունների մասնակցելու համար:

Սեյեդիուման Հեսամյանի մասնակցությամբ կատարված գործողությունների ոստիկանության Կենտրոնական բաժնում մասնակցել է մասնավոր թարգմանիչ Զնարիկ Գալստյանի:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ և 83-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 13178717 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «ՎԻ Գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ Հրանուշ Սկրտչի Թախմասյանին / A N0780981/:
2. Հրանուշ Սկրտչի Թախմասյանին պարգաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև մախաբանության գործով ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ՔՆՆԻՉ՝

Վ.Մ.Բավսյան

Ծանոթացա թարգմանիչի իրավունքներին և պարտականություններին, նախազգուշացվել քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Հ. Թախմասյանին

« » _____ 2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
թարգմանիչ հրավիրելու մասին

«22» հոկտեմբերի 2018թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության կոռուպցիոն, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների և կիրքեռհանցագործությունների քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչ Թ.Նալբանդյանս, վերանայելով վարույթում քննվող թիվ 58158917 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության կոռուպցիոն, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների և կիրքեռհանցագործությունների քննության վարչությունում քննվում է ՀՀ քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցված թիվ 58158917 քրեական գործը, որի նախաքննությամբ պարզվել է հետևյալը.

Սամվել Արսենյանը 2017թ. հուլիսի 19-ին համացանցի «List.am» կայքում «Toyota RAV4» մակնիշի ավտոմեքենա գնելու վերաբերյալ պայմանավորվածություն է ձեռք բերել ոմն «Linda Laperle» և վերջինիս ամուսին ներկայացած «Marc Duval» տվյալներով անձանց հետ, ովքեր տեղեկացնելով, որ հիշյալ ավտոմեքենան գտնվում է Հայաստանի Հանրապետությունում՝ պահանջել են դրա դիմաց վճարվելիք 4,500 ԱՄՆ դոլար գումարը «Money Gram» համակարգի միջոցով փոխանցել Ֆրանսիական Հանրապետություն՝ «Le Bras Vincent Andre» տվյալներով անձին:

2017թ. հուլիսի 24-ին Սամվել Արսենյանն ավտոմեքենայի դիմաց պահանջված, խոշոր չափերով 2,154,825 ՀՀ դրամին համարժեք 4,500 ԱՄՆ դոլար գումարը «Կոնվերս Բանկ» ՓԲ ընկերությունից «Money Gram» համակարգի միջոցով փոխանցել է Ֆրանսիական Հանրապետություն՝ «Le Bras Vincent Andre» տվյալներով անձին, ինչի արդյունքում համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ հիշյալ գումարը հափշտակվել է:

Նկատի ունենալով, որ նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել կատարել գրավոր թարգմանություն՝ հայերեն լեզվից ֆրանսերեն և, որ «Վի Գրուպ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Ալինա Վարդանի Խաչատրյանն ազատորեն տիրապետում է հայերեն և ֆրանսերեն լեզուներին, չի հանդիսանում քրեական գործով շահագրգռված անձ և կարող է հրավիրվել որպես թարգմանիչ, ուստի՝ ելնելով վերոգրյալից ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Թիվ 58158917 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել Ալինա Վարդանի Խաչատրյանին /ծնված՝ 29.07.1984թ., ՀՀ քաղաքացի, անձնագիր՝ AN0696778, տրված՝ 01.11.2013թ. 044-ի կողմից, հաշվառված՝ Արարադի մարզ, ք.Մասիս, Նոր թղմ., 15/22. քն.10/ և նրան պարգաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված՝ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար քրեական պատասխանատվության մասին:

ՀԿԳ ավագ քննիչ՝

Թ.Նալբանդյան

Ծանոթացա որոշմանը, ինձ բացատրվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ նախազգուշացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված՝ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝

Ա.Խաչատրյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Քրեական գործով թարգմանիչ ներգրավելու մասին

24 հուլիսի, 2018թ

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ, երկրորդ դասի խորհրդական՝ Հ.Ս.Հարությունյան, վերանայելով վարույթումս քննվող թիվ 13144415 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

2015թ. ապրիլի 09 ին՝ ժամը 23:00-ի սահմաններում, Մարտիկ Անդրանիկի Ներսիսյանը Երևան քաղաքի Մյասնիկյան պողոտայում գտնվող "Ռիցար" հյուրանոցային համալիրի թիվ 202 սենյակում դեմքին հարվածելու, ձեռքով պարանոցը սեղմելու միջոցով ծեծել և այլ բռնի գործողություններ է կատարել նույն հյուրանոցային համալիրի մոտոցող Հասմիկ Գևորգի Ֆոսանգյանի նկատմամբ՝ վեջինիս պատճառելով մարմնական վնասվածք:

Դեպքի առթիվ 2015 թվականի ապրիլի 28-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով հարուցվել է թիվ 13144415 քրեական գործը:

18.08.2015 թվականին որոշում է կայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-138-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով որպես մեղադրյալ ներգրավելու մասին, որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

02.07.2018 թվականին Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների դատախազությունից ստացված գրության համաձայն՝ Մ.Ներսիսյանը հայտնաբերվել է ԳԴՀ-ում:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել ԳԴՀ-ի իրավասու մարմիններին ներկայացնել Մ.Ներսիսյանի հանձնման պաշտոնական միջնորդությունը՝ կից փաստաթղթերի հետ միասին, որոնք անհրաժեշտ է թարգմանել գերմաներեն լեզվով, ուստի, անհրաժեշտություն է առաջացել սույն քրեական գործով վարույթին ներգրավել <<Վի գրուպ>> ՍՊԸ-ի թարգմանիչ Սաթենիկ Հայփյանին/ անձնագիր՝ BA 0387407/ նշված փաստաթուղթը թարգմանելու համար:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Թիվ 13144415 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել <<Վի գրուպ>> ՍՊԸ-ի թարգմանիչ Սաթենիկ Հայփյանին:

2. <<Վի գրուպ>> ՍՊԸ-ի թարգմանիչ Սաթենիկ Հայփյանին պարգաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ԱՎԱԳ ՔՆՆԻՉ՝

Հ.Ս.Հարությունյան

թարգմանիչ

Ս. Հայփյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

թարգմանիչ ներգրավելու մասին

30.07.2018թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության մարդու ղեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության ՀԿԳ քննիչ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Վ.Վ.Մամիկոնյանս քննարկելով վարույթումս քննվող թիվ 58208818 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2017 թվականի հունիսի 8-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 38-329-րդ հոդվածի 2-րդ մասի և 329-րդ հոդվածի 2-րդ մասի հասկանիչներով հարուցվել է թիվ 58208817 քրեական գործը:

Նախաքննության ընթացքում տեղեկություններ են ստացվել, որ գործով մեղադրյալ Քյամալ Քալաշյանը ՌԴ մեկնելու նպատակով դեռևս 2017 թվականին անօրինական ճանապարհով ՀՀ քաղաքացու անձնագիր ձեռք բերելու խնդրանքով դիմել է Վրաստանի քաղաքացի, ազգությամբ հայ, Երևան քաղաքի Մելքումովի փողոցի 11 շենքի 19 բնակարանի բնակիչ՝ 07.09.1977թ. ծնված Անի Պողոսի Էլիզբարյանին: Պարզվել է, որ Անի Էլիզբարյանի կողմից հետագայում Քյամալ Քալաշյանին որևէ փաստաթուղթ չի տրամադրվել:

Կատարված նախաքննությամբ պարզվել է, որ Անի Էլիզբարյանը և դեռևս ինքնությունը չպարզված ոմն Կարեն Սիմոնյանը, գործելով նախնական համաձայնությամբ և նպատակ ունենալով ապօրինի եղանակով գումար աշխատել, 2016-2017 թ.թ. ընթացքում համապատասխան վարձատրության դիմաց, ՌԴ-ից արտաքսված մի շարք անձանց համար կեղծել և վերջիններիս են իրացրել իրավունք վերապահող պաշտոնական փաստաթղթեր հանդիսացող՝ Վրաստանի պետական սպասարկումների զարգացման գործակալություն Ախալքալակի քաղաքացիական ռեեստրի գործակալության ամուսնության և ամուսնալուծության կեղծ վկայականներ:

2018 թվականի մայիսի 3-ին ՀՀ ԱԱԾ քննչական վարչությունում որոշում է կայացվել թիվ 58208817 քրեական գործի նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մասով նոր՝ թիվ 58208818 քրեական գործը հարուցելու, այն առանձին վարույթում առանձնացնելու և նախաքննության ուղարկելու մասին:

2018 թվականի մայիսի 16-ին թիվ 58208818 քրեական գործն ընդունվել է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչություն, ընդունվել է վարույթ և կատարվում է նախաքննություն:

Նախաքննության ընթացքում առգրավվել են Անի Էլիզբարյանին պատկանող բջջային հեռախոսն ու երկու դյուրավիր համակարգիչները, որոնք զննվել են և զննության ընթացքում ստացված նյութերն ուղարկվել են ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի արտաքին կապերի բաժին՝ հայերեն թարգմանելու նպատակով:

ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի արտաքին կապերի բաժնից ստացվել է գրություն այն մասին, որ վրացերեն լեզվից թարգմանությունը կատարվելու է «Գլխ. Գրուպ» ՍՊ ընկերության թարգմանիչ Նելլի Թոռչյանի կողմից:

Նկատի ունենալով, որ նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել վրացերեն լեզվից կատարել թարգմանություններ, որի համար անհրաժեշտ է ներգրավել թարգմանիչ, ով տիրապետում է վրացերեն լեզվին, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 15-րդ և 83-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Սույն քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել <<Վի Գրուպ>> ՍՊԸ-ի վրացերեն լեզվի թարգմանիչ Նելլի Թոռչյանին, որն քրեական գործով չջահագրգռված անձ է:
2. Թարգմանիչ Նելլի Թոռչյանին պարզաբանել նրա իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին, որի մասին նրան հայտնել ստորագրությամբ:

ՀԿԳ քննիչ



Վ.Վ.Մամիկոնյան

Սույն որոշումն ինձ հայտարարվել է <<31>> 02 2018թ.: Ես նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Միաժամանակ ինձ պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանիչի պարտականություններն ու իրավունքները:

Թարգմանիչ



Ն.Թոռչյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ հրավիրելու մասին

31.07.2018թ.

Ք. Գյումրի

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության քննիչ
Լ.Համբարձումյան, քննարկելով վարույթիս 22150918 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2018 թվականի հունիսի 8-ին ոստիկանության Շիրակի մարզային վարչությունից ոստիկանության Ամասիայի բաժին է ստացվել ՀՀ ոստիկանության շտաբի պետի 31.05.2018 թվականի թիվ 2/3-2-1600 գրությունը և կից փաստաթղթերը, որոնց ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2006 թվականին ունեցող Գայանե Քուրքյանը այլ անձի պատկանող ծննդյան վկայական ներկայացնելով ոստիկանության Ամասիայի անձնագրային խմբից ստացել է ՀՀ քաղաքացու կեղծ անձնագիր:

Փաստի առթիվ ՀՀ Ամասիայի բաժնում 18.06.2018 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է 22150918 քրեական գործը և նախաքննություն կատարելու համար ուղարկվել է Շիրակի մարզային քննչական վարչություն:

Նկատի ունենալով, որ հիշյալ քրեական անհրաժեշտ է հայերեն տարգմանել համապատասխան փաստաթղթերը ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Վարույթիս 22150918 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել <<Վի Գրուպ>> ՍՊ ընկերության աշխատակից՝ թարգմանիչ Ելենա Տուղուշին /ունի լիազորագիր, ազատորեն տիրապետում է հայերեն և վրացերեն գրավոր ու բանավոր լեզուներին/:

2. Ելենա Տուղուշին նախազգուշացնել ակնհայտ կեղծ թարգմանություն կատարելու համար, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված, քրեական պատասխանատվության մասին, միաժամանակ նրան ծանոթացնել թարգմանիչի իրավունքներին ու պարտականություններին:

Քննիչ՝



Լ.Համբարձումյան

Ծանոթացա որոշմանը, ստացա իմ
իրավունքների և պարտականությունների ցանկը



Ե.Տուղուշին

ՈՐՈՇՈՒՄ

Թարգմանիչ ներգրավելու մասին

02 մարտի 2017թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ՀԿԳ քննիչ ՀՀ Չալարյանս, վերանայելով վարույթում քննվող թիվ 58201016 քրեական գործի նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Կուրայի Հանրապետության քաղաքացիներ Բադրատա Լիմոնտա Մեզոնթը, Յասսեր Բենքոմո Օուտեզան և Լեյլեն Գոմես Լիմոնտան, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, շահադիտական նպատակով՝ յուրաքանչյուրի համար 8.000 ԱՄՆ դոլար գումարի դիմաց, մտադրվել են Հայաստանի Հանրապետության տարածքով կազմակերպել երկուսից ավելի անձանց՝ Կուրայի Հանրապետության քաղաքացիներ Լուիզ Միգել Կարրերա Մարտինեսի, ամուսիններ Յոել Ռոդրիգես Գոմեսի, Մոնիկա Ռեյես Կալեռոնի և վերջիններիս 2 երեխաներին ԱՄՆ անօրինական միգրացիա:

Հանցավոր մտադրության իրականացման համար 2014 թվականից սկսած ուղղորդել են նշված քաղաքացիներին մեկնել ՌԴ, այնուհետև՝ ՀՀ, որտեղից և պետք է կազմակերպվեր նույն անձանց ԱՄՆ անօրինական միգրացիան, ինչը սակայն նշված քաղաքացիների ՀՀ ժամանելուց հետո չի հաջողվել՝ Լ.Կարրերա Մարտինեսի, Յ.Գոմեսի և Մ.Կալեռոնի հաղորդումներ ներկայացնելու պատճառով:

Դեպքի առթիվ 2016թ. մայիսի 27-ին ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչությունում հարուցվել է թիվ 58207816 քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 329.1-րդ հոդվածի 1-ին մասով և 329.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով:

2016թ. փետրվարի 15-ին սույն քրեական գործն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչություն, իսկ գործի հետագա նախաքննության կատարումը հանձնարարվել է ինձ:

Նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել հարցաքննել Կուրայի հանրապետության մի շարք քաղաքացիների ովքեր չեն տիրապետում հայերեն գրավոր լեզվին, այլ տիրապետում է իսպաներեն լեզվին:

Նկատի ունենալով, որ քրեական գործով անհրաժեշտություն է առաջացել հարցաքննել նշված անձանց, ովքեր չեն տիրապետում հայերեն գրավոր լեզվին, ուստի հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր. ի 83-րդ հոդ. պահանջներով,

ՈՐՈՇՈՒՄ

1. Սույն քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել <<Վի Գրուպ>> ՍՊ ընկերության թարգմանչուհի Աննա Հարությունյանին /անձնագիր AN0205723, տրվ. 26.07.2012թ. իս. 001-ի կողմից/, ում պարզաբանվել է ՀՀ քրեական դատավարության

օրենսգրքի 83-րդ. հոդվածով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները և
նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ. հոդվածով նախատեսված
պատասխանատվության մասին:

ՀԿԳ ԲՆՆԻՉ՝



ՀՀ ՉԱԼԱԲՅԱՆ

Որոշման հետ ծանոթացա, իմ իրավունքները
և պարտականությունները ինձ պարզաբանված են
թարգմանիչ՝



<< 02 >> 03 2016թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ ներգրավելու մասին

17 հունվարի 2018թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ՀԿԳ քննիչ Հ.Հ.Չալաբյանս, վերանայելով վարույթում քննվող թիվ 58207816 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Կուբայի Հանրապետության քաղաքացիներ Բադբառա Լիմոնտա Մեգոեթը, Յասսեր Բենքոմո Օոտեգան և Լեյինե Գոմես Լիմոնտան, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, շահադիտական նպատակով՝ յուրաքանչյուրի համար 8.000 ԱՄՆ դոլար գումարի դիմաց, մտադրվել են Հայաստանի Հանրապետության տարածքով կազմակերպել երկուսից ավելի անձանց՝ Կուբայի Հանրապետության քաղաքացիներ Լուիզ Միգել Կաբրերա Մարտինեսի, ամուսիններ Յոել Ռոդրիգես Գոմեսի, Մոնիկա Ռեյես Կալեռոնի և վերջիններիս 2 երեխաներին ԱՄՆ անօրինական միգրացիա:

Հանցավոր մտադրության իրականացման համար 2014 թվականից սկսած ուղղորդել են նշված քաղաքացիներին մեկնել ՌԴ, այնուհետև՝ ՀՀ, որտեղից և պետք է կազմակերպվեր նույն անձանց ԱՄՆ անօրինական միգրացիան, ինչը սակայն նշված քաղաքացիների ՀՀ ժամանելուց հետո չի հաջողվել՝ Լ.Կաբրերա Մարտինեսի, Յ.Գոմեսի և Մ.Կալեռոնի հաղորդումներ ներկայացնելու պատճառով:

Դեպքի առթիվ 2016թ. մայիսի 27-ին ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչությունում հարուցվել է թիվ 58207816 քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 329.1-րդ հոդվածի 1-ին մասով և 329.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով:

2016թ. փետրվարի 15-ին սույն քրեական գործն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչություն, իսկ գործի հետագա նախաքննության կատարումը հանձնարարվել է ինձ:

Նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել մի շարք քննչական և դատավարական գործողություններ կատարելու համար իրավական օգնություն ցույց տալու հարցում ուղարկել Ֆրանսիայի Հանրապետություն:

Նկատի ունենալով, որ քրեական գործով անհրաժեշտություն է առաջացել հայերենից ֆրանսերեն թարգմանել իրավական օգնություն ցուցաբերելու պահանջը, ուստի հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 83-րդ հոդ. պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Սույն քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել <<Վի Գրուպ>> ՍՊ ընկերության թարգմանչուհի Ալինա Խաչատրյանին, ում պարզաբանվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իրավունքներն ու

պարտականությունները և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով
նախատեսված պատասխանատվության մասին:

ՀԿԳ ՔՆՆԻԶ՝



Հ.Հ.ԶԱԼԲԱԶԻԱՆ

Որոշման հետ ծանոթացա, իմ իրավունքները
և պարտականությունները ինձ պարզաբանված են
թարգմանիչ՝ 

<<

>>

_____ 2017թ.

ՈՐՈՇՈՒՄ

Թարգմանիչ հրավիրելու մասին

16-ը ապրիլի 2018թ.

քաղաք Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ, արդարադատության մայրո Ա.Հ.Կարապետյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 12162218 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

2018թ. փետրվարի 23-ին ոստիկանության Էրեբունու բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով և ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներու հարուցվել է թիվ 12162218 քրեական գործը հետևյալ փաստի առթիվ.

2018թ. փետրվարի 2-ին Հասմիկ Սաֆարյանը ոստիկանության Էրեբունու բաժնում հաղորդում է տվել այն մասին, որ նույն օրը՝ ժամը 15:30-ի սահմաններում, իր հարևանությամբ բնակվող ամուսիններ ժաննա Վարդանյանը և Լավիշ Մադաանը Երևան քաղաքի Մ.Խորենացի 47/7 շենքի թիվ 15 բնակարանի մուտքի մոտ վիճաբանել են իրենց հետ, որի ընթացքում Լ.Մադաանը ձեռքերով բազմաթիվ հարվածներ է հասցրել իր և իր դուստր Նարինե Սաֆարյանի մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ:

Նույն օրը ժաննա Վարդանյանը հաղորդում է տվել այն մասին, որ նշված հասցեի մոտ վիճաբանել են Նարինե և Հասմիկ Սաֆարյանների հետ, որի ընթացքում վերջինս կոշիկով հարվածներ է հասցրել իր և ամուսնու մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով ֆիզիկական ցավ:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ 2018թ. փետրվարի 2-ին Երևան քաղաքի Մ.Խորենացի 47/7 շենքի 15 բնակարանի մուտքի մոտ ժաննա Վարդանյանը, Լավիշ Մադաանը, Հասմիկ Սաֆարյանը և Նարինե Սաֆարյանը վիճաբանել են միմյանց հետ, որի ընթացքում Լավիշ Մադաանը ձեռքերով հարվածներ է հասցրել Հասմիկ և Նարինե Սաֆարյաններին՝ նրանց պատճառելով մարմնական վնասվածքներ և վնասել է վերջիններիս տան մուտքի դուռը՝ պատճառելով շուրջ 150.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

Փետրվարի 26-ին քրեական գործն ընդունվել է վարույթ:

Քրեական գործի քննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել կասկածյալ Լավիշ Մադաանի մասնակցությամբ կատարել քննչական և դատավարական գործողություններ, սակայն Լ.Մադաանը չի տիրապետում հայերեն բանավոր և գրավոր լեզվին:

Նկատի ունենալով, որ անհրաժեշտ է հարցաքննել Լավիշ Մադաանին, իսկ Մանիկ Աչարյան ազատորեն տիրապետում հայերեն և անգլերեն լեզուներին, շահագրգռված չի գործի ելքով, ուստի ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 55-րդ, 15-րդ և 83-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Մանիկ Հենրիկի Աչարյաին /ծնված 10.11.1990թ., նույնականացման քարտ 005149513, բարձրագույն կրթությամբ/ հրավիրել որպես թարգմանիչ, նրան պարզաբանել ՀՀ քր. դատ. օր-ի 83-րդ հոդվածով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ՀՀ քր. օր-ի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:
2. Սույն որոշման մասին հայտնել Մ.Աչարյաին և նրան պարզաբանել որպես թարգմանիչի՝ ՀՀ քր. դատ. օր. 83 հոդ. նախատեսված իրավունքներն ու պարտականությունները:

Ավագ քննիչ՝



Ա.Վ.Կարապետյան

Որոշումն ինձ հայտնվել է, պարզաբանվել են որպես թարգմանիչի՝ ՀՀ քր. դատ. օր. 83-րդ հոդ. նախատեսված իրավունքներն ու պարտականությունները:

Թարգմանիչ՝



Մ.Հ.Աչարյա

Որոշումը հայտնեց և իրավունքներն ու պարտականություններ պարզաբանեց՝

Ավագ քննիչ՝



Ա.Կարապետյան

31. հուլիսի 2018թ.

Արարատի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Վ. Սարգսյանս քննարկելով թիվ 44105116 քրեական գործի նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2016 թվականի մարտի 8-ին՝ ժամը 01:20-ին, Էրեբունի բժշկական կենտրոնից ոստիկանության Արտաշատի բաժին ահազանգ է ստացվել, որ փակ գանգուղեղային վնասվածքով հիվանդանոց բուժօգնության է դիմել Արարատի մարզի Բյուրավան գյուղի բնակիչ, 29.06.1986թ. ծնված Ավետիս Գառնիկի Հովհաննիսյանը:

Ահազանգի հիման վրա նախապատրաստված նյութերով պարզվել է, որ 2016 թվականի մարտի 7-ին՝ ժամը 01-ի սահմաններում, Ավետիս Գառնիկի Հովհաննիսյանը ալկոհոլային հարբածության վիճակում գտնվել է Արտաշատ քաղաքի Մյասնիկյան փողոցի 137 ա հասցեում գտնվող <<Ամոռե>> գիշերային ակումբում և ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու համար ակումբի աշխատակից, Արարատի մարզի Արևշատ գյուղի բնակիչ Գեղամ Արամի Հակոբյանի պահանջով Ա.Հովհաննիսյանը սրահից դուրս է եկել ակումբի դիմաց: Նույն պահին սրահից ակումբի դիմաց դուրս է եկել Գեղամ Հակոբյանի եղբայրը՝ Արարատի մարզի Արևշատ գյուղի բնակիչ, 10.12.1976թ. ծնված Գրիշա Արամի Հակոբյանը և դիտողություն է արել Ա.Հովհաննիսյանին ակումբի սրահում ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու համար, ինչին Ա.Հովհաննիսյանը պատասխանել է՝ հայեցողություններ հնչեցնելով, որից հետո Գրիշա Հակոբյանը բռնկվելով դիտավորությամբ հարվածներ է հասցրել Ավետիս Հովհաննիսյանի գլխի և դեմքի շրջանին, ինչի հետևանքով վերջինս վայր է ընկել, այնուհետև նրան Գ.Հակոբյանը նստեցրել է Վազ-21061 մակնիշի 35 TS 874 հ/հ մակնիշի ավտոմեքենան՝ տուն տանելու նպատակով և ավտոմեքենան փոքր-ինչ առաջ վարելու ընթացքում Ա.Հովհաննիսյանը մեքենայից վայր է ընկել:

Համաձայն դատաբժշկական փորձաքննության թիվ 0025/հ եզրակացության՝ Ավետիս Հովհաննիսյանի առողջությանը՝ փակ գանգուղեղային վնասվածքի, գանգի թաղի ոսկրերի կոտրվածքի, գլխուղեղի միջին աստիճանի սալջարդի կոնտուզիոն հեմոռագիկ օջախների առաջացումով, էպիդուրալ, սուբարախնոիդալ արյունազեղումների, աչքերի կոպերի արյունազեղումների, կրծքավանդակի, գոտկային շրջանի, աջ սրունքի և ձախ ծնկան հոդի քերծվածքների ձևով, պատճառվել է կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս:

Դեպքի առթիվ 18.03.2016թ. որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 44105116 քրեական գործը, կատարվել է նախաքննություն:

Քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում՝ 2016 թվականի ապրիլի 25-ին, որոշում է կայացվել Գրիշա Արամի Հակոբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավվելու մասին, այն արարքի համար, որ նա, 2016 թվականի մարտի 7-ին՝ ժամը 00:30-ի սահմաններում, գտնվելով եղբոր՝ Գեղամ Արամի Հակոբյանի կողմից շահագործվող, Արտաշատ քաղաքի Մյասնիկյան փողոցի թիվ 137 ա հասցեում գտնվող <<Ամոռե>> գիշերային ակումբում, նկատել է, որ ակումբի հաճախորդ, Արարատի մարզի Բյուրավան գյուղի բնակիչ, 29.06.1986թ. ծնված Ավետիս Գառնիկի Հովհաննիսյանը, գտնվելով ալկոհոլի ազդեցության տակ, սկսել է գոգոռալ, անհասցե հայեցողություններ տալ և այդ ընթացքում նրա մոտ գտնվող զարեջրի շիշը ընկել է հատակին ու կոտրվել է: Դրանից հետո Գեղամ Հակոբյանի պահանջով Ավետիս Հովհաննիսյանը դուրս է եկել ակումբի բակ, որտեղ Գեղամ և Գրիշա Հակոբյանները դիտողություն են արել Ավետիս Հովհաննիսյանին, սակայն վերջինս, արված դիտողությունը ցավագին տանելով, հայեցողություններ է տվել Գեղամ և Գրիշա Հակոբյանների հասցեին, որից հետո Գրիշա Հակոբյանը բռնկվելով դիտավորությամբ երկուսից երեք անգամ հարվածել է Ավետիս Հովհաննիսյանի գլխին, ինչի հետևանքով նա վայր է ընկել և նրա առողջությանը՝ փակ գանգուղեղային վնասվածքի, գանգի թաղի ոսկրերի կոտրվածքի, գլխուղեղի միջին աստիճանի սալջարդի կոնտուզիոն հեմոռագիկ օջախների առաջացումով, էպիդուրալ, սուբարախնոիդալ արյունազեղումների, աչքերի կոպերի արյունազեղումների, կրծքավանդակի, գոտկային շրջանի, աջ սրունքի և ձախ ծնկան հոդի քերծվածքների ձևով պատճառվել է ծանր վնաս:

25.04.2016թ. որոշում է կայացվել մեղադրյալ Գրիշա Հակոբյանին հետախուզում հայտարարելու մասին, և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

31.08.2016թ. որոշմամբ քրեական գործի վարույթը կասեցվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով, մինչև մեղադրյալին հայտնաբերելը:

Ոստիկանության Արտաշատի բաժնից 08.01.2018թ. Մասիսի քննչական բաժին է ստացվել թիվ 44/2-8514 գրություն այն մասին, որ ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվել է, որ թիվ 44105116 քրեական գործով մեղադրյալ Գրիշա Հակոբյանը՝ եղբոր Ալբերտ Հակոբյանի BA սերիայի թիվ 2642076 կենսաչափական անձնագրով 2016 թվականի մարտի 30-ին՝ ժամը 08-ին հատել է ՀՀ պետական սահմանը <<Բազրատաշեն>> սահմանային անցակետով և որ նա ՀՀ-ից մեկնել է <<Օպել>> մակնիշի 85 ՕԱ 005 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով, որը վարել է Արարատի մարզի Արևշատ գյուղի բնակիչ Աշոտ Ռաֆիկի Հովհաննիսյանը:

Որպես վկա լրացուցիչ հարցաքննվել է Ալբերտ Արամի Հակոբյանը, ով ցուցմունք է տվել, որ ինքը ոստիկանության Մարաշի անձնագրային բաժանմունք չի դիմել, BA սերիայի թիվ 2642076 կենսաչափական անձնագիր չի ստացել: Ինքը և եղբայրը՝ Գրիշա Հակոբյանը, արտաքինից նման են իրար և հավանաբար Գրիշա Հակոբյանն է դիմել և ստացել այդ կենսաչափական անձնագիրը:

Որպես վկա հարցաքննվել է Աշոտ Ռաֆիկի Հովհաննիսյանը, ով ցուցմունք է տվել, որ իր ավտոմեքենան վարել է որպես տաքսի: Գրիշա Հակոբյանի խնդրանքով 2016 թվականի մարտի 30-ին իր ավտոմեքենայով նրան Արարատի Արևշատ գյուղից տեղափոխել է Վրաստանի Հանրապետության Թբիլիսի քաղաքում գտնվող օդանավակայան, որպեսզի նա այնտեղից մեկնի: Նրան թողելով օդանավակայան վերադարձել է ՀՀ:

05.02.2018թ. որոշմամբ քրեական գործով կասեցված վարույթը վերսկսվել է:

Վարույթն իրականացնող մարմնի կողմից 2018 թվականի մարտի 16-ին զեկուցագիր է ներկայացվել Մասիսի քննչական բաժնի պետին այն մասին, որ 2016 թվականի մարտի 18-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված և վարույթում քննվող թիվ 44105116 քրեական գործի նախաքննությամբ պարզվել է, որ սույն քրեական գործով մեղադրյալ, հետախուզվող Գրիշա Արամի Հակոբյանը /ծնված 10.12.1976թ., հաշվառված է Արարատի մարզ գ.Արևշատ Սպանդարյան փողոց 23-րդ տուն/ 2016 թվականի մարտի 30-ին՝ ժամը 0008-ին, հատել է ՀՀ պետական սահմանը <<Բազրատաշեն>> սահմանային անցակետով՝ մեկնելով Վրաստանի Հանրապետություն: Պարզվել է նաև, որ մեղադրյալ Գրիշա Արամի Հակոբյանը եղբոր՝ Ալբերտ Արամի Հակոբյանին /ծնված 25.01.1979թ./ Արտաշատի անձնագրային ծառայության կողմից 24.01.2012թ. տրված ՀՀ քաղաքացու AM սերիայի թիվ 0611948 անձնագրի հիման վրա 2016 թվականի փետրվարի 4-ին դիմել է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Մարաշի անձնագրային ծառայություն ՀՀ քաղաքացու նույնականացման քարտ և կենսաչափական անձնագիր ստանալու համար ու նույն օրը նրանից վերցվել են նրա կենսաչափական տվյալները և դիմումը, ինչի արդյունքում 2016 թվականի փետրվարի 5-ին տրվել է BA սերիայի թիվ 2642076 կենսաչափական անձնագիրը, իսկ 2016 թվականի փետրվարի 9-ին թիվ 006896898 նույնականացման քարտը:

Վարույթում քննվող թիվ 44105116 քրեական գործի նախաքննության ընթացքում լիազորություններս իրականացնելիս հանցագործության մասին տվյալների հայտնաբերման վերաբերյալ ներակայացրած զեկուցագրի հիման վրա 2018 թվականի մարտի 16-ի որոշմամբ հարուցվել է թիվ 44101918 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով ու ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 1-ին մասով և այն ընդունվել է վարույթ:

Թիվ 44101918 քրեական գործի նախաքննությամբ պարզվել է, որ Գրիշա Արամի Հակոբյանը ՀՀ քաղաքացու նույնականացման քարտ և ՀՀ քաղաքացու կենսաչափական անձնագիր կեղծելու իր կողմից անձամբ օգտագործելու դիտավորությամբ՝ եղբոր՝ Արարատի մարզի Արևշատ գյուղի Սպանդարյան փողոցի 23-րդ տան բնակիչ, 25.01.1979թ. ծնված Ալբերտ Արամի Հակոբյանին ՀՀ ոստիկանության Անձնագրային և վիզաների վարչության Արտաշատի անձնագրային ծառայության կողմից 24.01.2012թ. տրված ՀՀ քաղաքացու AM սերիայի թիվ 0611948 անձնագրի հիման վրա 2016 թվականի փետրվարի 4-ին դիմել է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Մարաշի անձնագրային ծառայություն ՀՀ քաղաքացու նույնականացման քարտ և կենսաչափական անձնագիր ստանալու համար ու նույն օրը նրանից վերցվել են դիմում և Ալբերտ Հակոբյանի կենսաչափական տվյալները, ինչի արդյունքում 2016 թվականի փետրվարի 5-ին Գրիշա Հակոբյանին տրվել է եղբոր՝ Ալբերտ Հակոբյանի տվյալներով, սակայն իր լուսանկարով BA սերիայի թիվ 2642076 կենսաչափական անձնագիրը, իսկ 2016 թվականի փետրվարի 9-ին՝ թիվ 006896898 նույնականացման քարտը, որից հետո Գրիշա Հակոբյանը, չունենալով Հայաստանի

Հանրապետության պետական սահմանը հատելու իրավունք վերապահող սահմանված փաստաթղթեր եւ պատշաճ թույլտվություն, Հայաստանի Հանրապետության պետական սահմանն ապօրինի հատելու դիտավորությամբ, օգտագործելով ակնհայտ կեղծ փաստաթուղթ հանդիսացող եղբոր՝ Ալբերտ Արամի Հակոբյանի տվյալներով, սակայն իր լուսանկարով ՀՀ քաղաքացու BA սերիայի թիվ 2642076 կենսաչափական անձնագիրը, 2016 թվականի փետրվարի 25-ին՝ ժամը 1640-ին, ժամը 1715-ին և 2016 թվականի մարտի 30-ին՝ ժամը 0008-ին ապօրինի հատել է Հայաստանի Հանրապետության պահպանվող պետական սահմանը՝ <<Բագրատաշեն>> սահմանային անցակետով:

2018 թվականի մարտի 26-ի որոշմամբ թիվ 44101918 քրեական գործը միացնել թիվ 44105116 քրեական գործին մեկ վարույթում և նախաքննությունը շարունակվում է թիվ 44105116 քրեական գործի համարով:

2018 թվականի մարտի 26-ին որոշում է կայացվել թիվ 44105116 քրեական գործով մեղադրյալ Գրիշա Արամի Հակոբյանին՝ 25.04.2016թ. ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը փոփոխել և այն լրացնել՝ նրան նոր մեղադրանք առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով, 4 դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով, 3 դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 1-ին մասով:

2018 թվականի մարտի 26-ին որոշում է կայացվել Գրիշա Արամի Հակոբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով, 4 դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով, 3 դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրյալ ներգրավվելու մասին հանրորեն վտանգավոր այն արարքի համար, որ նա, իրավունք վերապահող պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող ՀՀ քաղաքացու նույնականացման քարտ և ՀՀ քաղաքացու կենսաչափական անձնագիր կեղծելու իր կողմից անձամբ օգտագործելու դիտավորությամբ՝ եղբոր՝ Արարատի մարզի Արևաշատ գյուղի Մպանդարյան Անձնագրային և վիզաների վարչության Արտաշատի անձնագրային ծառայության կողմից 24.01.2012թ. տրված ՀՀ քաղաքացու AM սերիայի թիվ 0611948 անձնագրի հիման վրա 2016 թվականի փետրվարի 4-ին դիմել է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Մարաշի անձնագրային ծառայություն և ՀՀ քաղաքացու նույնականացման քարտ և կենսաչափական անձնագիր ստանալու համար դիմումով ներկայացնել է կեղծ տվյալներ՝ եղբոր՝ Ալբերտ Հակոբյանի կենսաչափական տվյալները, ինչի արդյունքում 2016 թվականի փետրվարի 5-ին Գրիշա Հակոբյանին տրվել է ակնհայտ կեղծ՝ եղբոր՝ Ալբերտ Հակոբյանի տվյալներով, սակայն իր լուսանկարով BA սերիայի թիվ 2642076 կենսաչափական անձնագիրը, իսկ 2016 թվականի փետրվարի 9-ին՝ թիվ 006896898 նույնականացման քարտը:

Բացի այդ, Գրիշա Արամի Հակոբյանը 2016 թվականի փետրվարի 25-ին, չունենալով Հայաստանի Հանրապետության պահպանվող պետական սահմանը հատելու իրավունք վերապահող սահմանված փաստաթղթեր եւ պատշաճ թույլտվություն, Հայաստանի Հանրապետության պետական սահմանն ապօրինի հատելու դիտավորությամբ, օգտագործելով ակնհայտ կեղծ փաստաթուղթ հանդիսացող եղբոր՝ Ալբերտ Արամի Հակոբյանի տվյալներով, սակայն իր լուսանկարով ՀՀ քաղաքացու BA սերիայի թիվ 2642076 կենսաչափական անձնագիրը, նույն օրը՝ ժամը 1640-ին, ապօրինի հատել է Հայաստանի Հանրապետության պահպանվող պետական սահմանը՝ <<Բագրատաշեն>> սահմանային անցակետով:

Բացի այդ, Գրիշա Արամի Հակոբյանը 2016 թվականի փետրվարի 25-ին, չունենալով Հայաստանի Հանրապետության պահպանվող պետական սահմանը հատելու իրավունք վերապահող սահմանված փաստաթղթեր եւ պատշաճ թույլտվություն, Հայաստանի Հանրապետության պետական սահմանն ապօրինի հատելու դիտավորությամբ, օգտագործելով ակնհայտ կեղծ փաստաթուղթ հանդիսացող եղբոր՝ Ալբերտ Արամի Հակոբյանի տվյալներով, սակայն իր լուսանկարով ՀՀ քաղաքացու BA սերիայի թիվ 2642076 կենսաչափական անձնագիրը, նույն օրը՝ ժամը 1715-ին, ապօրինի հատել է Հայաստանի Հանրապետության պահպանվող պետական սահմանը՝ <<Բագրատաշեն>> սահմանային անցակետով՝ մուտք գործելով Հայաստանի Հանրապետություն:

Բացի այդ, Գրիշա Արամի Հակոբյանը 2016 թվականի մարտի 7-ին՝ ժամը 00:30-ի սահմաններում, գտնվելով եղբոր՝ Գեղամ Արամի Հակոբյանի կողմից շահագործվող, Արտաշատ քաղաքի Մյասնիկյան փողոցի թիվ 137 ա հասցեում գտնվող <<Ամոռե>> գիշերային ակումբում, նկատել է, որ ակումբի հաճախորդ, Արարատի մարզի Բյուրավան գյուղի բնակիչ, 29.06.1986թ. ծնված Ավետիս Գառնիկի Հովհաննիսյանը, գտնվելով ալկոհոլի ազդեցության տակ, սկսել է գոգոռալ, անհասցե հայհոյանքներ տալ և այդ ընթացքում նրա մոտ գտնվող զարեջրի շիշը ընկել է հատակին ու կոտրվել է: Դրանից հետո Գեղամ Հակոբյանի պահանջով Ավետիս Հովհաննիսյանը դուրս է եկել ակումբի բակ, որտեղ Գեղամ և Գրիշա Հակոբյանները

դիտողություն են արել Ավետիս Հովհաննիսյանին, սակայն վերջինս, արված դիտողությունը ցավագին տանելով, հայեցողություններ է տվել Գեղամ և Գրիշա Հակոբյանների հասցեին, որից հետո Գրիշա Հակոբյանը բռնկեցով դիտավորությամբ երկուսից երեք անգամ հարվածել է Ավետիս Հովհաննիսյանի գլխին, ինչի հետևանքով նա վայր է ընկել և նրա առողջությանը՝ փակ գանգուղեղային վնասվածքի, գանգի թաղի ոսկրերի կոտրվածքի, գլխուղեղի միջին աստիճանի սալջարդի կոնսուզիոն հեմոռագիկ օջախների առաջացումով, էպիդուրալ, սուբարախնդալ արյունազեղումների, աչքերի կոպերի արյունազեղումների, կրծքավանդակի, գոտկային շրջանի, աջ սրունքի և ձախ ծնկան հողի քերծվածքների ձևով պատճառել է ծանր վնաս:

Բացի այդ, Գրիշա Արամի Հակոբյանը 2016 թվականի մարտի 30-ին, չունենալով Հայաստանի Հանրապետության պահպանվող պետական սահմանը հատելու իրավունք վերապահող սահմանված փաստաթղթեր եւ պատշաճ թույլտվություն, Հայաստանի Հանրապետության պետական սահմանն ապօրինի հատելու դիտավորությամբ, օգտագործելով ակնհայտ կեղծ փաստաթուղթ հանդիսացող ելբոր Ալբերտ Արամի Հակոբյանի տվյալներով, սակայն իր լուսանկարով ՀՀ քաղաքացու BA սերիայի թիվ 2642076 կենսաչափական անձնագիրը, նույն օրը ժամը 0008-ին, ապօրինի հատել է Հայաստանի Հանրապետության պահպանվող պետական սահմանը՝ <<Բագրատաշեն>> սահմանային անցակետով՝ մուտք գործելով Վրաստանի Հանրապետություն:

Նախաքննության ընթացքում ՀՀ-ում Ինտերպոլի ԱԿԲ-ից գրություն է ստացվել այն մասին, որ Գրիշա Արամի Հակոբյանը հայտնաբերվել է Գերմանիայի ԴՀ իրավասու մարմիններին կողմից:

Գրիշա Հակոբյանին ՀՀ իրավապահ մարմիններին հանձնելու միջնորդություն ներկայացնելու համար անհրաժեշտություն է առաջացել սույն քրեական գործով հայերենից թագմանել փաստաթղթեր 3 օրինակից:


Նկատի ունենալով, որ քրեական գործով Գրիշա Հակոբյանին ՀՀ իրավապահ մարմիններին հանձնելու միջնորդություն ներկայացնելու կապացությամբ անհրաժեշտություն է առաջացել սույն քրեական գործից հայերենից գերմաներեն թարգմանել Գրիշա Արամի Հակոբյանի վերաբերյալ փաստաթղթեր, ինչի համար անհրաժեշտ է <<Վի Գրուպ>> ՍՊԸ աշխատակից, գերմաներեն լեզվի թարգմանիչ Ալեքսանդր Գենադիի Սաչենյուկը /անձնագիր 7506021951/, ով տիրապետում է գերմաներեն ու հայերեն գրավոր լեզուներին, ճանաչել թարգմանիչ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ հոդվածի 4-րդ մասի 12-րդ կետով և 83-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Վարությամբ քննվող թիվ 44105116 քրեական գործով որպես գերմաներեն լեզվի թարգմանիչ Ալեքսանդր Գենադիի Սաչենյուկին ճանաչել թարգմանիչ և նրան պարգաբանել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանիչի իրավունքներն ու պարտականությունները, նախագգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ՀԿԳ քննիչ  Վ. Սարգսյան

Որոշմանը ծանոթացա, պարգաբանվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները, նախագգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԹԱՐԳՄԱՆԻՉ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«75» 08 2018թ.

ք.Արմավիր

ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Ա.Մարտիրոսյանս, վերանայելով թիվ 48100716 քրեական գործի նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության վարույթում գտնվող թիվ 48100716 քրեական գործով ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով հետերպոլի «Կարմիր անկյունով», քարտի տեսքով միջազգային մակարդակով հետախուզվող Արամայիս Հովհաննեսի Միրզոյանի վերաբերյալ Գերմանիայում հետերպոլի ԱԿԲ-ից տեղեկատվություն է ստացվել այն մասին, որ վերջինս ամենայն հավանականությամբ բնակվում է Գերմանիայի տարածքում, ինչի կապակցությամբ անհրաժեշտություն է առաջացել սեղմ ժամկետներում ՀՀ գլխավոր դատախազության միջոցով կազմակերպել դիվանագիտական ուղիներով Արամայիս Հովհաննեսի Միրզոյանի հանձնման արարողակարգում անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի փոխանցումը ԳԴՀ Նյուրնբերգի գլխավոր դատախազությանը:

Քրեական գործով հայերեն լեզվով կազմված որոշ դատավարական փաստաթղթեր գերմաներեն լեզվով թարգմանելու նպատակով ուղարկվել են ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի ղեկավարին:

Նկատի ունենալով, որ թիվ 48100716 քրեական գործով հայերեն լեզվով կազմված որոշ դատավարական փաստաթղթեր գերմաներեն լեզվով թարգմանելու համար անհրաժեշտ է հրավիրել հայերեն և գերմաներեն լեզուներին ազատորեն տիրապետող ու գործով չշահագրգռված թարգմանիչ, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 48100716 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել „Վի Գրուպ“, ՍՊԸ-ի թարգմանիչ Ալեքսանդր Գենադիի Սաչենյուկին, ով ազատորեն տիրապետում է հայերեն և գերմաներեն լեզուներին և գործով չչափազրգույնացած անձ է:

2. Թարգմանիչ Ալեքսանդր Գենադիի Սաչենյուկին պարզաբանել նրա իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 196-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության վերաբերյալ, որի մասին նրան հայտնել ստորագրությամբ:

ՀԿԳ ԱՎԱԳ

ՔՆՆԻՉ

Ա.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

